Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2018 թվական, սեպտեմբերի 19-21, Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ-Պետերբուրգ

4. Հրավիրող կողմը.

Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Եվրասիական կանանց համաժողովին:

Համաժողովը նպատակ ուներ ընդգծելու կնոջ դերը քաղաքականության և տնտեսության տարբեր ոլորտներում, համախմբել Եվրասիական երկրների համագործակցությունը վերը նշված ասպարեզում, ուղիղ, հավասար և գործնական կապեր ստեղծել նշված երկրների կառավարման համակարգում գործող կին գործիչների միջև:

6. Քննարկված թեմաները.

Համաժողովին հրավիրված էին մասնակցելու ԱՊՀ անդամ պետությունների առողջապահության նախարարներ, ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին աշխատող կանանց առողջության համար հաջող և անվտանգ ամենօրյա աշխատանքային անհրաժեշտ պայմանների ստեղծման, ինչպես նաև առողջապահությունում վարչական որոշումների ընդունման մեջ կնոջ ակտիվ մասնակցության խրախուսմանն առնչվող հարցեր, կանանց շահերից բխող համամարդկային և ազգային գործողությունների ռազմավարությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը: Ներկայացրեց Հայաստանի տեսլականը ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ որպես գլոբալ խնդիր, ելույթում ընդգծելով կնոջ դերը այդ ասպարեզում:

Երկկողմ հանդիպումներ կայացան ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային տնօրեն Վինեյ Սալդանայի և ԱՊՀ անդամ պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ քննարկվեցին հետագա համագործակցության ուղղությունները, որոնք կնպաստեն ԱՊՀ անդամ պետությունների բնակչությունների առողջությանը և բարեկեցությանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց մշտական դարձնել մասնակիցների կապը և համագործակցությունը, ինչը թույլ կտա կանանց համատեղ ջանքերով լուծել օրակարգային և ռազմավարական խնդիրները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց խորացնել փոխհամաձայնեցված համագործակցությունն ԱՊՀ անդամ պետությունների միջև, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրների միասնական գործակցությունն ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի մյուս երկրների հետ՝ այս ամենում ներառելով կանանց գործնական աշխատանքը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

2018թ. հոկտեմբերի 4